

ԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ-ռուսական (պլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ



ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ

Հայաստանի Հանրապետությունում գործող ցանկացած դատական ատյան հայցադիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի ներկայացվող փաստաթուղթը բավարարի որոշակի իրավական պահանջներին: Դատավարական օրենսգրքերով հստակորեն ամրագրված են անհրաժեշտ բոլոր պահանջներն ու նախապայմանները, որոնք չբավարարելու դեպքում հայցադիմումի ընդունումը մերժվում է: Սույն աշխատանքի շրջանակներում դատավարական օրենսգրքերի շարքում հարկ ենք համարում առանձնապես անդրադառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին (այսուհետ նաև՝ Օրենսգիրք), որը նույնպես պարունակում է հայցադիմումի ընդունումը մերժելուն վերաբերող դրույթներ:

Այսպես, Օրենսգրքի 79-րդ հոդվածը, որը զետեղված է 12-րդ գլխում («Հայցադիմումի ընդունումը, հայցադիմումը վերադարձնելը, հայցադիմումի ընդունումը վերժեցումը և հայցադիմումի ընդունումը մերժելու ընթացակարգը, դրա հիմքերն ու պայմանները: Մասնավորապես, վարչական դատարանի կողմից հայցադիմումի ընդունումը մերժվում է հետևյալ դեպքերում. եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության, նույն անձանց միջև, նույն առարկայի մասին, և նույն հիմքերով առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, այլ դատարանի վարությամբ առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ, **հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը** (1-ին մաս, կետ 4), Օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի թերությունները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար, մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն հետ վերցնելու մասին, բացառությամբ Օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված գործերի: Նույն հոդվածի 2-րդ մասի համա-

ձայն՝ անձը գործի հարուցումը մերժելուց հետո չի կարող նույն առարկայի և միևնույն հիմքերով կրկին դիմել դատարան, բացառությամբ այդ հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով նախատեսված դեպքերի, իսկ 3-րդ մասը նախատեսում է, որ վարչական դատարանը հայցադիմումի ընդունումը մերժելու մասին կայացնում է որոշում՝ եռօրյա ժամկետում որոշումը ուղարկելով հայցվորին և պատասխանողին, իսկ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ հայցվորին:

Գործնականում հաճախ բախվում ենք այնպիսի մոտեցման հետ, համաձայն որի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով վերջինս հնարավորություն է տալիս դատարանին՝ ի խախտումն կողմերի իրավահավասարության, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, դատական պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների, առանց գործի ըստ էության քննություն իրականացնելու և քննվող գործի վերաբերյալ կողմերին իրենց դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն ընձեռելու՝ գնահատել և ըստ էության լուծում տալ նյութական իրավունքի վերաբերյալ վեճին, որոշել կողմերի իրավունքների և պարտականությունների բովանդակությունը, քննել դատավարական բնույթի այլ հարցեր գործը վարույթ ընդունելու փուլում, որում կողմերի մասնակցությամբ դատական նիստ չի անցկացվում: Ներկայացված հարցադրումներին անդրադառնում ենք ստորև.

Նախևառաջ նկատենք, որ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկայի մասին» N-127 որոշմամբ այդ իրավադրույթի կիրառման վերաբերյալ տրվել է որոշակի պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում)¹, որի վերլուծության և ընդհանրացման արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը,

www.lawinstitute.am

որ վիճարկվող իրավանորմը մեկնաբանելիս պետք է առանձնակի ուշադրություն դարձնել, մասնավորապես, հետևյալ դրույթների վրա՝

- վարչական դատավարության օրենսգիրքն առաջին հերթին հայց ներկայացնելու հնարավորություն է ընձեռում միայն այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնց իրավունքները և շահերը խախտվել են, և նման հնարավորություն չի ընձեռում յուրաքանչյուր անձի՝ հանրության շահերը պաշտպանելու համար, այսինքն՝ չի թույլատրում իրականացնել իրավաչափության լոկ օբյեկտիվ վերահսկողություն.

- անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի խախտված «իրական (ռեալ)» իրավունքներ.

- հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում դատարանը պետք է գնահատի հայցի թույլատրելիությունը, մասնավորապես, առկա չեն արդյո՞ք հայցադիմումը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքեր.

- նման իրավակարգավորումը նպատակ է հետապնդում բացառելու այն գործերի անհարկի քննությունը, որոնք ներկայացվել են ակնհայտորեն հայց հարուցելու իրավունք չունեցող անձանց կողմից, ինչը բխում է հենց դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքից, քանզի անձը անտեղի ժամանակ չի վատնի գործի քննությանը մասնակցելու վրա, նախապես կտեղեկացվի խախտված իրավունքի սուբյեկտ չհանդիսանալու մասին.

- սույն իրավակարգավորումը հարկ է դիտարկել բողոքարկման իրավունքի առկայության համատեքստում, ինչի պարագայում ակնառու է, որ կողմը երբևէ չի գրկվում արդար դատաքննության իր իրավունքից և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկել օրենսգրքով սահմանված ընթացակարգերի համաձայն:

Այսպես, վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ Օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն են-

թարկվել է վարչական պատասխանատվության:

Այս առումով նշենք, որ հիմնագուրկ ենք համարում ներկայացվող այնպիսի փաստարկը, համաձայն որի՝ սահմանադրական կարևորագույն սկզբունքների վրա հիմնված 3-րդ հոդվածով նախատեսված յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի վարչական դատարան դիմելու իրավունքը 79-րդ հոդվածով սահմանափակվում է, քանզի ուսումնասիրվող իրավիճակում հնարավոր չէ արձանագրել վարչական դատարանի կողմից անձանց իրավահավասարության, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, դատական պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների խախտում, մասնավորապես, այն պատճառաբանությամբ, որ Օրենսգրքի 3-րդ հոդվածի և 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի միջև թվացյալ հակասականությունն իրականում գոյություն չունի: Տվյալ դեպքում 3-րդ հոդվածը կարելի է համարել ընդհանուր նորմ (և ոչ միայն Օրենսգրքի 3-րդ հոդվածը, այլ նաև ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածը, ըստ որի՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ), իսկ 79-րդ հոդվածով նախատեսված դեպքերը կարող ենք ընկալել որպես հատուկ նորմ կամ ընդհանուր նորմից բացառություն, այդ կանոնի առանձնահատուկ արտացոլում:

Ինչպես հայտնի է, իրավաբանական գրականության մեջ հանդիպում են իրավական նորմերի տարբեր դասակարգումներ, որոնցից մեկն էլ ըստ իրենց կարգավորող գործողության ոլորտի (կամ ծավալի) նորմերի տարանջատումն է ընդհանուր (*jus generalis*) և հատուկ (*jus specialis*) նորմերի, երբեմն էլ հանդիպում է բացառիկ կամ յուրահատուկ նորմ (*jus singulare*) հասկացությունը: Ամեն դեպքում պարզ է, որ հատուկ կամ բացառիկ նորմը չի կարող հակասել ընդհանուր իրավադրույթին, քանզի ընդհանուր նորմերը սահմանում են ընդհանուր բնույթի իրավակարգավորումներ, իսկ հատուկ նորմերն ապահովում են միևնույն առարկայի առավել կոնկրետ, մանրամասն և առանձնահատուկ կարգավորումը: Բացի այդ, հանրահայտ է լատիներեն **“lex specialis derogat generalis”** արտահայտությունը, ինչը թարգմանվում է «հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրը կամ դադարեցնում է ընդհանուրի գործողությունը»: Այդ սկզբունքից բխում է, որ ընդհանուր և հատուկ բնույթի իրավական նորմերի միջև ծագող հնարավոր հակասության դեպքում նախապատվությունը տրվում է *հատուկ նորմին*, այսինքն՝ քննարկվող հոդվածը, 3-րդ հոդվածի համեմատությամբ նախատեսելով այլ իրավակարգավորում և վերջինիս նկատմամբ սահմանելով բացառություն, ստանում է առաջնային բնույթ, ու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տիև գործնականում դրա գործողության իրավաչափության վերաբերյալ որևէ կասկած չի կարող առաջանալ:

Բացի այդ, Օրենսգրքի 3-րդ հոդվածը և սահմանում է ոչ թե բացարձակապես յուրաքանչյուրի վարչական դատարան դիմելու իրավունքը, այլ *միայն նրանց, ում իրավունքներն անմիջականորեն խախտվել են կամ էլ կարող են խախտվել*, այսինքն՝ ըստ երևույթին, խոսքը *միայն շահագրգիռ անձանց* մասին է:

Հարկ ենք համարում ՀՀ օրենսդրությունում առկա վերոնշյալ հոդվածը դիտարկել ինչպես մեր պետության ողջ օրենսդրական բազայի տրամաբանության համատեքստում, այնպես էլ անդրադարձ կատարելով վերջինիս սահմանադրականության խնդրի ուսումնասիրության շրջանակներում մեր երկրում սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմնի իրավական դիրքորոշումներին:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը, իր որոշումներից մեկում անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությանը, արձանագրում է, որ այդ նորմով դատարան դիմելու իրավունքը վերապահվում է շահագրգիռ անձին, այն է՝ *անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են*: Միաժամանակ, գտնում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը զնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու զնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի *իրավական շահագրգռվածություն*²:

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտը կանոնակարգող միջազգային իրավական կարևորագույն փաստաթղթերում առկա հետևյալ ձևակերպումները.

Այսպես, 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, Սահմանադրությամբ կամ օրենքով *իրեն* վերապահված հիմնական իրավունքների խախտման դեպքում, ունի ներպետական ատյանների (ազգային դատարանների) կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք», իսկ 10-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, *իր* իրավունքների և պարտականությունների սահմանման և *իրեն* ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի և

հրապարակային դատաքննության իրավունք»:

1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են *նրա* քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ *նրան* ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք, *նրան* ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք քննելու կամ որևէ դատավարությունում *նրա* իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները նույնպես, համապատասխանաբար նախատեսելով յուրաքանչյուրի *իր* իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք և *իր* խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև *իրեն* ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար համապատասխան ընթացակարգով իր գործի քննության իրավունք ունենալու հնարավորությունները, մատնանշում են հենց «*իր իրավունքներ*» արտահայտությունը, ինչը հաստատում է, որ իրավունքների պաշտպանության ինստիտուտը ենթադրում է ոչ թե վերացականորեն պաշտպանություն հայցող, այլ կոնկրետ գործով իրավական շահագրգռվածություն ունեցող անձի դատարան դիմելու իրավունքի առկայությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը մեկ այլ որոշմամբ ևս արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ՝ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան

դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց **իրավունքները խախտվել են³**:

Օրենսդրական որոշակի դրույթների վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը փաստում է, որ այս կամ այն դատավարության շրջանակներում շահագրգիռ անձանց ներքո հանդես են գալիս նախևառաջ այն անձինք, որոնց իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, և ուրիշի փոխարեն դատարան դիմելու իրավունքը գործում է միայն սահմանափակ դեպքերում և նախատեսված է այն իրավիճակների համար, երբ այն անձը, որի իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, օբյեկտիվ պատճառներով չի կարող անմիջականորեն դիմել դատարան (օրինակ՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ լինելը), կամ օրենսդիրը, հետապնդելով իրավաչափ նպատակ, այլ անձի կամ անձանց, հանրության խախտված իրավունքների պաշտպանությունը կանոնակարգում է հանրային գործառույթի և հանրային շահերի համատեքստում (օրինակ՝ հանցագործությունների կամ համայնքի սեփականության իրավունքի խախտման դեպքում): Այդուհանդերձ, բոլոր դեպքերում, ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ (նշված որոշման 6-րդ կետ):

Ավելացնենք նաև, որ նույն որոշման 8-րդ կետում սահմանադրական դատարանը նշում է, որ վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի (“Actio popularis”) առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով և լրիվ ծավալով կիրառում չունի, և մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»:

Սույն վարչադատավարական նորմը հարկ է դիտարկել նաև բողոքարկման իրավունքի կիրառելիության լույսի ներքո, ինչի կապակցությամբ նշենք, որ Օրենսգրքի 22-րդ գլխի 125-րդ հոդվածը սահմանում է բողոքարկման ենթակա վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի շրջանակը, մասնավորապես ամրագրելով, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են հետևյալ միջանկյալ դատական ակտերը՝ **հայցադիմումի ընդունումը մերժելու մասին**, վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը մերժելու մասին, հայցադիմումը վերադարձնելու մասին և

այլն: Բացի այդ, հիշատակված հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկություն կարգով: Հետևապես, անձը չի գրկվում արդար դատաքննության իրավունքից, քանզի նա իրավունք ունի բողոքարկելու համապատասխան դատական ակտը, եթե համարում է, որ ինքը սովյալ գործով, այնումենայնիվ, հանդիսանում է շահագրգիռ անձ և կարող է ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, բողոքը հիմնավորող առավել ծանրակշիռ փաստարկներ և այլն:

Օրենսգրքի ուսումնասիրվող հոդվածին ՀՀ սահմանադրական դատարանը անդրադարձել է ՄԳՈ-1022 որոշմամբ, որում, մասնավորապես, արձանագրում է, որ օրենսդիրը, նախատեսելով վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, նրանց՝ դատարան դիմելու իրավունքի իրականացումը յուրաքանչյուր դեպքում պայմանավորել է որոշակի իրավական նախադրյալների, այն է՝ «իրավական շահի» առկայությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր դատավարական սուբյեկտի պարագայում այն կրում է իրեն ներհատուկ բնույթ: Նրանց «իրավական շահը», կախված գործի փաստական հանգամանքներից, ինչպես նաև կոնկրետ սուբյեկտի իրավական կարգավիճակից, կրում է անհատականացված, կոնկրետ հասցեավորված բնույթ, և դրա առկայությունը յուրաքանչյուր դեպքում ենթակա է պարտադիր բացահայտման վարչական դատավարության՝ հայցադիմումի ընդունելիության փուլում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև *համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու նկատմամբ իրավական շահի առկայության համատեքստում*՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները:

Բացի այդ, դիտարկելով վերոհիշյալ իրավական կարգավորման կառուցակարգը, սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ օրենսդիրը վարչական դատարան ներկայացվող հայցադիմումի ընդունելիության հարցի լուծման առնչությամբ սահմանել է դատարանի լիազորությունների սպառիչ ցանկը, որոնց իրականացմամբ՝ դատարանը վարչական դատավարու-

թյան հիշյալ փուլում պետք է իրավական գնահատական տա, թե արդյո՞ք հայցվորն իրավասու է դիմել դատարան, արդյո՞ք առկա է նրա մոտ դատարան դիմելու իրավական պահանջ, արդյո՞ք հայցվորը կարող է հանդիսանալ խախտման օբյեկտ հանդիսացող իրավունքի կրող: Սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը: Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում **բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը**: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության և հայցվորի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջև առկա հնարավոր պատճառահետևանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամբողջամամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը**, այսինքն՝ հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը (հիշատակված որոշման 7-րդ կետ):

Անշուշտ, **«հայցադիմում ներկայացնելու իրավունք ակնհայտորեն չունեցող անձ»** եզրույթի էությունն ու իրավական բովանդակությունը պարզաբանելու համար անհրաժեշտ է բացահայտել «ակնհայտ» հասկացության և **ակնհայտության չափանիշի** բովանդակությունը:

Այսպես, Հր. Աճառյանի բառարանում նշվում է. «Ակն - առաջին և հիմնական նշանակությունն է «աչք», ակն տալ «նայիլ, դիտել», ական դիպել «աչքին զարնել», «հայ (հայտ) «նայիլ», առանձին անգործածական, որից կազմված են՝ հայիլ «նայիլ, դիտել», հայարան «աչք»»: Մեկ այլ

բառարանում «ակնհայտ» բառի բացատրությունը տալու նպատակով հղում է կատարվում հոմանիշ բառի վրա՝ ակներև, (ակնյայտ, ակնյայտնի, ակնյայտնի ճշմարտություն), իսկ ակներև բառն իր հերթին նշանակում է. 1. աչքին պարզ երևացող, ակնյայտնի, անկասկածելի, Ակներև է, որ... Ակներև դարձավ, 2. Ակներև՝ ակնյայտնի կերպով: Ակներև ապացուցել:

Այս բառի (կամ դրա բաղադրիչների) վերոնշյալ բառարաններում տեղ գտած բացատրության վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ ակնհայտությունն իրենից ներկայացնում է **անմիջապես աչքի զարնող, առաջին իսկ դիտարկման պահին երևացող, աչքի ընկնող և ոչ մի կերպ չվրիպող ու կասկած չհարուցող ակներևություն**:

Այս առումով հարկ է նկատել, որ սահմանադրական դատարանի կարծիքով՝ միանգամայն տեղին է դատական դեպարտամենտի դիրքորոշման մեջ կատարված այն շեշտադրումը, համաձայն որի՝ **սույն նորմում տեղ գտած ձևակերպումը կարող է վերաբերել միայն չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ հայցադիմում ներկայացնելու իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ, և, իհարկե, չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը գործի ամբողջական և մանրակրկիտ ուսումնասիրության, մասնավորապես, նյութական իրավունքի խախտման առկայության հարցի գնահատման արդյունքում է հանգում նմանատիպ դիրքորոշման**:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1022 որոշման շրջանակներում միաժամանակ նշում է, որ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության փուլում **նյութական իրավունքի խախտման փաստի առկայության պարզումն** իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, նման փաստի հաստատումը կամ հերքումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների ու կողմերի իրավունքների պահպանմամբ, հակառակ դեպքում արդարացի դատաքննության իրավունքը կիմաստազրկվի: Հետևաբար, նշված փուլում ուսումնասիրվող նորմը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես **նյութական իրավունքի խախտման առկայությունն ստուգելու՝** վարչական դատարանի պարտավորվածություն՝ դրանով իսկ **ընդունելիության հարցի լուծումը կախման մեջ դնելով գործի դատաքննության փուլում ըստ էության լուծման ենթակա հարցից**, սահ-

մանափակելով վարչական դատարանի մատչելի-
ությունը՝ դատական պաշտպանության սահմա-
նադրաիրավական միջոցը դարձնելով անարդյու-
նավետ: Այս փուլում, ինչպես նշվեց, դատարանի
խնդիրն է ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի
խախտման առկայությունը, այլ ենթադրյալ
խախտված իրավունքը՝ տվյալ անձին ակնհայտորեն
պատկանելու կամ չպատկանելու հանգաման-
քը:**

Եվ, առհասարակ, ուշադրության է արժանի
այն հանգամանքը, որ հայցադիմում ներկայացնե-
լու իրավունքի ակնհայտ բացակայության պարա-
զայում դատարանի **ոչ թե իրավունքը, այլ պարտա-
կանությունն է** մերժել դրա ընդունումը և իրավացի-
որեն խուսափել ոչ տեղին ու քննության ոչ ենթակա
գործերի հետազոտությունից, ինչն էլ հանգեցնում է
դատարանի ավելորդ և անհիմն ծանրաբեռնվածու-
թյան և դատարանի վարույթում գտնվող մյուս գոր-
ծերի քննության անհարկի ձգձգումների:

Միանշանակորեն ընդունելի ենք համարում
այնպիսի իրավակարգավորումը, համաձայն որի՝
հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում դատա-
րանը պետք է զննհատի հայցի թույլատրելիությու-
նը և անդրադառնա այն հարցադրումներին, թե
արդյո՞ք առկա չէ հայցադիմումը վերադարձնելու
կամ դրա ընդունումը մերժելու որևէ հիմք: Օրենսգր-
քի 76-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումն
ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում դա-
տարանը կայացնում է հետևյալ որոշումներից մե-
կը՝ կամ հայցադիմումը վարույթ ընդունելու, կամ
այն վերադարձնելու, կամ էլ դրա ընդունումը մեր-
ժելու մասին: Դատավորը պարտավոր է վարույթ
ընդունել Օրենսգրքով նախատեսված պահանջնե-
րի պահպանմամբ ներկայացված հայցադիմումը,
եթե, իհարկե, առկա չեն 78-րդ և 79-րդ հոդվածնե-
րով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժե-
լու կամ այն վերադարձնելու հիմքերը: Բացի այդ,
Օրենսգրքի 77-րդ հոդվածի 7-րդ մասն ամրագրում
է, որ վարչական դատարանը սուսկ ձևական թերու-
թյունների հիմքով հայցադիմումը վարույթ չընդու-
նելու իրավունք չունի:

Անկասկած, կարող ենք փաստել, որ հայ-
ցադիմում ներկայացնելու իրավունք *ակնհայտորեն
չունենալը* երբևէ չի կարող համարվել ձևական,
առավել ևս ոչ էական թերություն կամ խախտում:
Տվյալ իրավիճակում հայցադիմումը վարույթ չի ըն-
դունվում, քանզի ինչպես բուն հայցադիմումի, այն-
պես էլ դրան կից փաստաթղթերի «մակերեսային»
և ընդհանրական ուսումնասիրությունն իսկ բավա-
րար հիմք է հանդիսանում, որպեսզի դատարանի
համար պարզ լինի կոնկրետ անձի այդ գործով շա-
հագրվող անձ չլինելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է այնպիսի պնդումներին,
թե համապատասխան դրույթի կիրառման դատա-
կան պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է
դատարանների կողմից տվյալ հարցի վերաբերյալ
ցուցաբերվող հակասական մոտեցումների մասին,
և թե հենց վիճարկվող նորմի բովանդակությամբ
պայմանավորված իրավական անորոշությունն է
իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում վերջի-
նիս այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը,
որը խախտում է կամ կարող է խախտել անձի
կոնկրետ սահմանադրական իրավունքներ, նշենք,
որ նմանաբնույթ պնդումներն ըստ էության, հիմնա-
գուրկ են, մասնավորապես, հետևյալ պատճառա-
բանությամբ.

Այսպես, սույն գիտական աշխատանքի
շրջանակներում ուսումնասիրության առարկա
իրավանորմի հետազոտության տեսնակյունից
կարևոր է պատասխանել այն հարցադրմանը, թե
վերոհիշյալ դրույթի նմանօրինակ ձևակերպումը
կարող է արդյո՞ք առաջացնել իրավական անորոշ-
ություն և հանգեցնել իրավակիրառական այնպիսի
պրակտիկայի ձևավորմանը, որի պայմաններում
խախտվեն անձի սահմանադրական հիմնարար
իրավունքները:

Կարծում ենք, որ վերոգրյալ իրավանորմը
«*չի տառապում իրավական անորոշության ախ-
տանիշով*», քանի որ իրավական որոշակիության
հիմնարար սկզբունք ասելով հասկանում ենք, որ
վարքագծի համապատասխան կանոնը ոչ միայն
պետք է ամրագրված լինի կոնկրետ իրավական
ակտում, այլև այն, որ օրենքով նախատեսված լի-
նելու պահանջը չի կարող նշանակել զուտ ձևական
ամրագրում օրենքում, իրավական նորմերը ոչ մի-
այն պետք է ուղղակի սահմանված լինեն օրենքում,
այլ նաև որոշակի պահանջներ ներկայացնեն կար-
գավորող օրենքի որակին, ինչպես նաև այդ օրենքը
պետք է համապատասխանի իրավական որոշակի-
ության սկզբունքին: Այս առումով ՀՀ սահմանադ-
րական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԳՈ-630
որոշման 11-րդ կետում՝ նշել է. «*որևէ իրավական
նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի հա-
մապատասխանում իրավական որոշակիության
(res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված
չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ
տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վար-
քագիծը*»:

Այդուհանդերձ, խնդրո առարկա իրավա-
նորմի և դրա իրավակիրառ պրակտիկայի հա-
մադրված վերլուծության արդյունքում պարզ է
դառնում, որ օրենսդրական մասն կարգավորումը
չի առաջացնում իրավական անորոշություն, որով-
հետև օրենսդրի կողմից դրա բովանդակությունը

ձևակերպված է բավարար ու անհրաժեշտ հստակությամբ, ինչն ընկալելի և ըմբռնելի է դարձնում սույն նորմը թե՛ ֆիզիկական/իրավաբանական անձանց, և թե՛ դատարանների համար: Ուստի, նման պայմաններում բացառվում է դատարանի կողմից հնարավոր հայեցողության դրսևորման չարաշահման հավանականությունը:

Այսօրինակ իրավակարգավորում նախատեսելիս՝ իրավաստեղծ մարմինը հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա նույնպիսի իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն ու կայացումը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը, և մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ևս մեկ

անգամ փաստում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության հարցի քննության փուլում այս նորմը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստը հաստատելու՝ օրենքով նախատեսված պահանջ կամ հայեցողություն:

¹ Առավել մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկայի մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 17.09.2011թ. որոշումը:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. ապրիլի 4-ի ՍԳՈ-747 որոշումը, կետ 7:

³ Մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. սեպտեմբերի 7-ի որոշումը, ՍԳՈ-906, կետ 5-8:

⁴ Տե՛ս «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՀՀ սահմանադրական դատարանի 2012թ. ապրիլի 17-ի որոշումը, ՍԳՈ-1022, կետ 4:

⁵ Տե՛ս Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե.-1971, Ա հատոր, Ա-Գ, էջ 106-108 և Ե.-1977, Գ հատոր, Հ-Չ, էջ 29-30:

⁶ Տե՛ս Հայերեն Բացատրական Բառարան, Ստ.Մալխասեանց: Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչություն, Եր.-1944, էջ 54:

РЕЗЮМЕ

Некоторые проблемы, связанные с отказом в принятии иска административным судом, в свете правовых позиций конституционного суда РА

Данная статья посвящена изучению конституционности п. 4 ч. 1 статьи 79 Административно-процессуального кодекса Республики Армения. Автор проанализировал актуальные проблемы, связанные с правом Административного Суда отказать в принятии некоторых исков по той причине, что они представлены людьми, очевидно не обладающими таким правом. В этой работе были изучены различные подходы решения проблем, возникающих в теории и на практике, и в частности, были представлены правовые позиции онституционного Суда РА о конституционности данной нормы.

SUMMARY

Some problems connected with refusal to accept application by the administrative court in the light of legal positions of the constitutional court of RA

This article is devoted to the study of constitutionality of paragraph 4, part 1, article 79 of the Administrative Procedure Code of the Republic of Armenia. The author has analyzed current problems associated with the the right of Administrative Court to refuse to accept some applications because they are represented by people who obviously don't have such right. In this work were studied different approaches of solving the problems, arising in the theory and practice, and particularly were presented legal positions of the Constitutional Court of RA on the constitutionality of this norm.